

ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ

ՔԱՂՔԻՆ ԱԶԳԱՅԻՆ

ԱՅԸ ԵՒ ԱՅԸ ՕՐԷՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

(Տես յ'էջ 475)

Ահա օրէնդրութիւնն ըստ ժամանակակից բնագրին.

« Աստուծոյ ողորմութեամբն 1763 զեկտմբրի 20, էլիզաբեդան.

Խորհուրդ անելով Պատուելի Մակեդոնացի Կեա Պատուելի Մուսային վասն ժելէրնուն, որ կու գրավին Պատուելի քաղքին զերիզոյի օւմին վրայ. վասն որ պէտք է, որ գրվին մեր քաղքին ապեց զապելային մէջ, էւ հանդպելով որ շատոնք իրենց մեջէն փախիլին կամ մերիլին. եւ պէտք էղիլէ, որ Պատուելի քաղքն վիճարէ զտալիքներն իրենց համար: Էւ այսպէս տեսնելով Պատուելի հասարակըն, որ շատ ըզգակ կու վիճարէ նաքասդ ¹, վասն այսորիկ, օր այս օնուշէն ² խալըսի քաղքըն ութվեցաւ Պատուելի հասարակին, որ ասոցից ինտան ունենան այն կազտաներն ³, որոնք որ շէլէր ունին մեր քաղքին մեջ գաուձիօն ըլալու. վասն այնպիսի ժելէրնուն որ զագուզոյ ⁴. մեկնորն փախչէր կամ մերնէր կամ աղբըտնար, որ չի կենար ուսոյի արնէլու զտալիքըն, նայ այն կազտանում մօտ կու զավի այն ժելէրն, զտալիքը Պատուելի քաղքին անպատճար վիճարելու: Էւ աս ալ զետացվի, որ ժելէրնուն բերձէբզօրն ունենա ժելէրնուն մօրէն զտալիքըն ուզելու մէկ տարիմընայ և զի կարենալով մեկ տարեմն մէջ զսգակըն այնպիսի ժելերէն արնէլու, նայ ունենայ կազտան վիճարելու: Էւ թէ օր անենար ժելէրն իբմն պօնում, որպէս տալար և այլն նայ, պի առնու կազտան զայն պօնումն կամ տալարն ու չէ բերձէբզօրն: Բերձէբզօրին ունենայ կազտան ինմետիադէ ⁵ բստիօլ վիճարելու և զտալարն կամ զօզկայ պօնումն պի առնու կազտան, էրկայ լիմիդացիօնէմ ⁶: Բայց ոչ իբմըն ալ չունենար ժելէրն, նայ, ամէնը կազտան ունենայ Պատուելի քաղքին վիճարելու:

1. Ի զուր, պարսպ տեղ:

2. Բեռ, ծանրութիւն, ծանրաբեռնութիւն. լատ. է:

3. Газда տանտէր, կալուածատէր. հունգ. է:

4. լատ. է. կը նշանակէ, ի դիպուածի, երբ որ:

5. Անընդմիջապէս. լատ. է:

6. Ըստ որչափան, ըստ զայնադրութեան. լատ. է:

Բայց գիտացիլի որ հօս հայերն, որն որ տան հախօվ կու կենան նայ, ան-
քայ չին հասգրցիլ. հապայ միայն օղկայ ազք ըլան » :

Կ'երեւայ թէ Եղիսաբեթուպոլսոյ ազգայինք շատ հօգ կը տանէին անոր
ալ, որ իրենց վարձակալներուն հոգեւոր պիտոյքներն ալ հոգացուի : Ասոր
վրայօք, Եղիսաբեթուպոլսոյ տարեգրոց մէջ յաջորդ հետաքրքրական դէպքը
կը կարգանք : Օրին մէկը՝ եկեղեցականը, քանի մը աղայի ներկայութեամբ
վալաք քահանան կանչել տուաւ . և խնդրեց իրմէն, որ ազգայնոց քով եղող
վալաքներուն հոգեւոր ծառայութիւններն այնպէս հոգայ, ինչպէս որ իբ հա-
ւատքն անոնցմէ կը պահանջէ, աւելցընելով՝ թէ ասոր համար զինք այնպէս
պիտի վարձատրեն, ինչպէս սովորութիւն է իրենց գեղացիներուն մէջ : Վա-
լաք տէրտէրն այս բանն այն կերպով միայն յանձն առուլ ուզեց, եթէ որ հայոց
քով եղած ծառայներուն և աղախիններուն սարուէ տարի մարդ մը ազգայ-
նոց կողմանէ ու մարդ մը իրեն կողմանէ կը խրկուի, որ վալաք հաւատա-
ցեալներէն բուրազն ¹ առնուն : Հայոց եկեղեցականը պատասխանեց որ այս
բանն չի կրնար ընել, որովհետև Գրանսիրուանիոյ մէջ ասանկ սովորութիւն չկայ :
Բայց ավելցուց թէ, ինչպէս որ ընդհանուր սովորութիւն է, պիտ'որ հրա-
մայէ, հայազգի տանաէրերուն, որ իրենց վալաք ծառայներն ու աղախիննե-
րը, կիրակի ու տօնի օրերը եկեղեցի խրկեն, ու ապապրեն միանգամայն,
որ տանին այն նուէրը, որ սովորութիւն ու պարտք է տալու իրենց քա-
հանային : Սակայն վալաք եկեղեցականն՝ առճիտ իր դրած պայմանին ու
կացին բան մ'ընել չուզեց : Այն ատեն խնդրեց իրմէն եկեղեցականն, որ
շնորհք ընէ . ու դռնէ իր հպատակները խոստովանցընէ ու հողորդէ . և ընէ
ինչ որ սովորութիւն է իրենց մէջ : Եւ երբ որ տեսնէ, որ մէկն իրեն
խօսքին չ'անտար, այն ատեն ծառայ մը խրկէ դատաւարին . և դատաւորն
այս բանն կարգի կը բերէ : Սակայն քահանան այս բանն ալ յանձն շա-
ուաւ : Այս գէպը՝ պատահեցաւ — կ'ըսէ տարեգիրը — Աղա Լուսիկ եկե-
ղեցականին, Աղա Խաչիկին, Աղա Վարդանին ու Պիրովին առջևը :

Ահա տարեգրին խօսքերը .

« 1735. Ապրիլի 15 . Էլիզաբեդան .

Օլախ տէրտէրը ձենէձինք զիմ պօլըը ² . վասն մեր մայերնուն (այսինքն)
օլախնուն սէպը ու խնդրեցինք զինքը, որ հօգայ գծեր մայերնուն օլախներն
ալ, ընտօր իրեն հաւատը կու խրատէ ու պիտանք իրեն հախ ընտօր իրենց
գեղացիքը : Ինքը կասէ, թէ պի հոգայ անպէս օր, ինչխար մանչ ու աղչիկ
կայ հայերուն մօտ նայ, տարեն մէկ անգամը տանք ա . մարդ մը ու ինքն
ալ պի խրկէ ա մարդ մը, որ քաղէր երեզան բուրաք ու տանք մէկ տեղ :
Մենք ասինք թէ մենք չինք անիլ ատպէս բան, զէ չիգայ այս երկրին

1 . փօքք ստակ մը :

2 . Bolt . հունգարերէն բառ է, կը նշանակէ՝ խանութ, կրպակ :

մէջը ատպէս բան, տարը ընտօր ատաթ է նայ, մինք պի ապըսարինք մեր մարդիդացը, օր ամէն մարդ լիօր ունի օլախ ծարայ, նայ տօն ալուրները ժամ էրթայ ու տանին զահանային, ինչ օր իրենց ատաթն է: Նայ ինքը կ'ասէ թէ ամենեւին շիպիկէ¹, եփոր ատպէս կսայ շանինք: Նայ մենք խնդրելիցանք, թէ անէ աղէկութիւն ու տայ իրենց սրբութիւն ու ինչօր իրենց ատաթն է, նայ հօգայ, ու որն օր տեսնու, օր անպէսն է նայ խրկէ ա տղամը պիրօլին մօտ, ետև, պիրօլը պի հօգայ զանպէս²: Նայ ինքն ամենեւին չուգէ: Եղաւ անժամը Աղաչայ եկեղեցրանը Լուսիկը, Աղա Վարդանը, Աղա Խաչիկը և Պիրօլը: —

Քաղաքային վարչութիւնը առողջապահութեան ու հասարակաց ապահովութեան մեծապէս հոգ կը տանէր միշտ: Ասոնց նկատմամբ արդէն 1738 ին կանոնադրութիւն մը հրատարակած կը գտնենք, որուն համեմատ — որովհետև ինչպէս կ'երևայ՝ այն միջոցի Գրանսիրուանիոյ և Հունգարիոյ մէջ ժանտափտը կը ճարակէր Շ պատուէր կը դուրի, որ քաղքէն զէպ ի վար, այսինքն զէպ ի Հերմանշգատ, Քարլսպուրկ և այլն ճանապարհորդող ու Եղիտաբեթուպոյսէն զուրտ զանտող մարդիկն ետ զառնալու ատեն քառասնեակ պահելու են: Թէ որ վաճառական մը հետը բամբակ ունենար՝ քառասուն օր քառասնեակ պահելէն ետև, թէպէտ կրնար քաղաք մտնել, սակայն իր ապրանքն ամենեւին քաղաք պիտի չկարենար մտցընել: —

Հասարակաց ապահովութեանը վրայօք քաղաքային վարչութեան ժողովներուն մէջ անանկ կարգադրութիւններ կը գտնենք, որոնք — նկատելով ժամանակն — մեծ յառաջադիմութեան նշան և քաղաքականութեան յառաջացեալ աստիճան կը ցուցընեն: Այսպէս, ի մէջ այլոց կը սահմանուի խորհրդանոցին մէջ, որ վարձէ քաղաքը չորս գիշերապահ, որոնցմէ մէկը միշտ գատաւորին քով զանուի. երկրորդ՝ վաճառանոցին վրայ հսկէ. իսկ մէկալ երկուքը քաղաքը վեր վար պտըպի ու հսկողութիւն ընէ, որ անկարգութիւն մը չպատահի: Պահանորդաց ձեռքը պիտի ըլլար մէկ մէկ փշելու գործիք, ինչպէս եղիւր, փող և այլն. և գիշերն, ամէն ժամուն, զանգակին զարնուելու ատեն, զործեքնին հնչեցընեն: Ասոնցմէ թէ որ մէկը ճուն ըլլար, երկրորդ օրը՝ տատուերկու գաւազան պիտի ուտէր:

Ուրիշ տեղ ալ կը գտնենք, թէ վարչութիւնը, քաղքին ապահովութեանը համար աւելի զօրաւոր միջոցներ բանեցուցած է: Որովհետև ասդիէն անդիէն շատ մը ըտրեր կը պտըտէին քաղքին մէջ, որոնք բնակաց հանգստութիւնը կը մրդովէին, անոր համար որոշուեցաւ, որ տանուէր կամ քաղաքացի մը տնէն հեռանալու ատեն, իրեն տեղ՝ տանը մէջ մարդ մը թողու, որ չըլլայ թէ բան մը պատահի: Որոշուեցաւ զարձեալ, որ գիշերները 15 քաղաքացի ձիաւոր գիշերապահութիւն ընելու ելլեն: Ասոնց մէջէն զանիկայ, որուն

1. Էլը նշանակէ, պէտք չէ, Գրանսիրուանիոյ հայոց լեզուան է:

2. Ամբողջ պարբերութիւնը մթին է:

վրայօք քաղքին դատաւորը կը համարի թէ, մէկալինբուն վրայ հսկողութիւն կրնայ ընել, վերակեցու զնէ. ու ինչ որ սոսիկայ հրամայէ, մէկայ 14 հոգին, ընդ պատժով երեք ֆիօրին տուգանաց իրեն հնազանդելու կը պարտաւորին: Աս բաւական չէ, ասոնց օգնութիւն տրուեցաւ զեռ 10 հոգի հետեւակ, որոնք քաղքին մէջ պիտի քալէին: Ասանկով՝ վերոյգրեալ չորս գիշերապահին հետ, ձիաւոր ու հետեւակ պահանտրոցաց թիւը 29ը եղաւ. որոնց զորձքը պիտ'որ սկսէր, իրիկուան ժամը իննին: Ձիաւորները պիտ'որ ունենային հետերնին սուր ու ատրճանակ և կամ թուր ու հրացան:

Բայց, որչափ պարագաներէն կրնանք հետեցընել, այս նոր կարգադրութեամբ ալ, քաղքին ներքին խաղաղութիւնը տեղը չեկաւ: Եւ որովհետեւ խոտութիւնները կը շարունակուէին և « Աստուծոյ ու մարդկան օրինաց զէմ » անկարգութիւնները կը շատնային, որպէս զի յստակուի քաղաքն այն անկարգութիւններէն՝ հասարակութիւնն օստիկանութեան վերաստեուչներ դրաւ, որ այս տեսակ բաներուն դէմ աչուընին բանան: Ասոնց իշխանութիւն տրուեցաւ, թէ ո՛ր և է տեսակ մարդ, ըլլայ ան քաղաքացի, կամ օտար, կամ վարձակալ կամ աւատառու, որ ինչ և իցէ կերպով կասկածաւոր բանի պատճառ տայ, կարենան բռնել ու բանտ զնել առանց դատաւորին հրամանին. ու զիրենք՝ ըստ իրենց զորձոյն պատժել: Քաղքին ապահովութեանը վրայ հսկող դրաւ վարչութիւնը զԱղաչայ թորոս Գէօրգօզեանց և զԱ. Մանուկ Շիմիլոյցեանց: Ասոնք՝ իրենց օգնութեան կրնային առնուլ, ծառայութեան մէջ չեղող քաղաքաբաշխութեան ծառաներ ու պահապանները. և ի գիպուածի հարկաւորութեան նաև բերդին պահանտրոցները: Աւելի հարկաւոր զէպքբու մէջ նոյն իսկ քաղաքացիք մանակից պէտք էին ըլլալ, կասկածաւոր մարդիկը բռնելու մէջ: Վասնզաւոր մարդիկը բռնած աստն յետատեսուչներն ալ պատժուած տուգանքէն մաս կ'ընդունէին: Սակայն գող բռնած ատեննին, դատաւորին ձեռքը տալու էին զանիկայ: Այս վերջիններու տուգանքէն իրենց մաս չէր իյնար:

Ա. Փիփաս

Շաքայարեյի

ՄԵՐ Ը ՏԱՌՆ Ձ, Ե ԵՒ Ս ՏԱՌԻՑ ՀԵՏ



ԱՅԴ երեք՝ գ, շ և ս սուր կամ շշող տառեր երբ գտուին բառից սկիզբը՝ բաղաձայն տառէ առաջ, բնութեամբ կ'առնուն ը տառն՝ ՚ի սկիզբն կամ ՚ի վերջ իւրեանց, — ուր այլք լոկ ՚ի վերջն, — և նորա հետ առանձին վանկ կը կազմեն. իսկ ձայնաւորէ առաջ գտուելով՝ կը միանան նորա հետ առանց ըի: Համեմատ մեր հասարակ սովորութեան այսպէս կը գործածուին ուրա.